

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր
ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ
N ՍՄ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-14/02-1/3-1/6-2/6-2/7

ք. Կապան

« 17 » « հունիսի » 2014թ.

„ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմ», պետական կառավարչական հիմնարկը, ի դեմս մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ռ. Ղազարյանի, որը գործում է „Պետական կառավարչական հիմնարկի», կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ **Պատվիրատու**) մի կողմից և «Մեղրու ՃՇՇՁ» ՍՊԸ ի դեմս Ռնկերության տնօրեն Ա. Գասպարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ **Կապալառու**), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 **Կապալառուն** պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ նախահաշվով նախատեսված ՀՀ Սյունիքի մարզի „Ագարակ համայնքի Ագարակ-մաքսատուն ճանապարհի կառուցման», „Մ2-Տաշտուն ճանապարհից Լիճք տանող ճանապարհի ասֆալտապատման», „Մեղրի համայնքի թիվ 1 դպրոցի տանիքի վերանորոգման», և „Սիսիան համայնքի թիվ 5 դպրոցի պատերի և հիմքերի ուժեղացման», աշխատանքները (այսուհետև՝ **Աշխատանք**), իսկ **Պատվիրատուն** պարտավորվում է ընդունել կատարված **Աշխատանքը** և վարձատրել դրա համար:

1.2 Սույն **Պայմանագրով** նախատեսված **Աշխատանքները** կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, **Աշխատանքի** նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող **Աշխատանքի** ծավալաթերթ նախահաշվին /Հավելված N 1/ համապատասխան:

1.3. Սույն **Պայմանագրով** նախատեսված **Աշխատանքները** սկսվում են **Պայմանագիրն** ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ մինչև 2014 թվականի դեկտեմբերի 25-ը:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. Կապալառուի միջոցներով աշխատանքները կատարելը

2.1 **Աշխատանքը** կատարվում է **Կապալառուի** ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 **Կապալառուն** պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Յանկացած ժամանակ ստուգել **Կապալառուի** իրականացրած **Աշխատանքի** ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 **Կապալառուի** կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել **Աշխատանքի** կատարման նոր ժամկետ և պահանջել **Կապալառուից** վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել **Աշխատանքի** արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն **Պայմանագրի** 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել **Կապալառուից** վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Սխակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե:

ա) **Կապալառուն** ժամանակին չի սկսում **Աշխատանքի** կատարումը կամ **Աշխատանքը** կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար.

բ) **Կապալառուն** խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) **Կապալառուի** կողմից կատարված **Աշխատանքը** չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) **Կապալառուի** կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով **Աշխատանքի** թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 **Աշխատանքի** արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ **Աշխատանքի** իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև **Պատվիրատուի** կողմից **Կապալառուի** կատարած **Աշխատանքի** արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ **Աշխատանքի** արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն **Պայմանագրով** նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 **Աշխատանքը** կատարելիս՝ աջակցել **Կապալառուին** սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով **Կապալառուի** մասնակցությամբ զննել և ընդունել կատարված **Աշխատանքը** (դրա արդյունքը), իսկ պայմանագրից **Աշխատանքի** արդյունքը վատթարացնող շեղումներ կամ **Աշխատանքում** այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել **Կապալառուին**.

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում **Կապալառուին** տրամադրել **Աշխատանքի** իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում **Աշխատանքի** արդյունքն ընդունելու դեպքում **Կապալառուին** վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում **Աշխատանքի** արդյունքը հանձնելու դեպքում **Պատվիրատուից** պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 **Պատվիրատուի** կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում **Պատվիրատուից** պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 **Աշխատանքների** առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, զործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել **Աշխատանքի** վերաբերյալ **Պատվիրատուի** տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն **Պայմանագրի** պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեոտոցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 **Աշխատանքի** արդյունքը **Պատվիրատուին** հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է **Աշխատանքի** արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և **Պատվիրատուի** կողմից **Աշխատանքի** կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել **Աշխատանքի** կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն **Պայմանագրի** 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել **Պատվիրատուին** պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օրյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա **Կապալառու** պարտավոր է իր հաշվին, **Պատվիրատուի** կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները: Սույն պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում պատվիրատուի կողմից ողջ ծավալով աշխատանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 405 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա **Կապալառու** պարտավոր է իր հաշվին, պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում, վերացնել թերությունները:

3.4.9 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել **Պատվիրատուին**:

4. Աշխատանքների հանձնման և ընդունման կարգը

4.1 **Պայմանագրի** կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են **Պատվիրատուի** և **Կապալառուի** միջև հանձնման ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն, Հավելված N 4) ստորագրմամբ:

Աշխատանքի կատարման պահից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում **Կապալառու** **Պատվիրատուին** է ներկայացնում այդ **Աշխատանքների** մասին իր կողմից ստորագրված հանձնման ընդունման արձանագրության երկու օրինակ:

4.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված **Աշխատանքը** համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և **Պատվիրատուն**՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները:

2) **Կապալառուի** նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 **Աշխատանքի** կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի **Աշխատանքների**, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ **Աշխատանքները** և ժամկետները: **Կապալառու** պարտավոր է պայմանագրային զնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ **Աշխատանքներ**:

4.4 **Պատվիրատուն** հանձնման ընդունման արձանագրությունը ստանալու պահից 3 /երեք/ օրյա ժամկետում **Կապալառուին** է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ **Աշխատանքը** չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 **Աշխատանքն** ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

2) **Կապալառուի** կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո **Պատվիրատուի** ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

3) մինչև ավարտված շինարարական օրյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626 Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օրյեկտը և կազմում օրյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օրյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված **Աշխատանքը**՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև պայմանագրի կատարման արդյունքը ընդունելու մասին հանձնման ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ **Պատվիրատուն** չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը (*իսկ տարածամեկեր վճարելու դեպքում՝ վերջին վճարումը*):

4.6 **Պայմանագրի** կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում **Կապալառուի** կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է **Կապալառուն**:

5. Աշխատանքի գինը և վարձափոխությունը

5.1 Սույն պայմանագրի աշխատանքների ընդհանուր պայմանագրային գինը կազմում է 131710927.0 /մեկ հարյուր երեսուն մեկ միլիոն յոթ հարյուր տասն հազար ինն հարյուր քսանյոթ/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ: Գինը ներառում է **Կապալառուի** կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերը, պարտադիր այլ վճարները՝ ընդ որում.

- **„Ազարակ համայնքի Ազարակ-մաքսատուն ճանապարհի կառուցման,,** աշխատանքների համար 37689504.0 /երեսուկյոթ միլիոն վեց հարյուր ութսունինն հազար հինգ հարյուր չորս/ ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ.
- **„Մ2-Տաշտուն ճանապարհից Լիճք տանող ճանապարհի ասֆալտապատման,,** աշխատանքների համար 14000000.0 /տասնչորս միլիոն/ ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ.
- **„Մեղրի համայնքի թիվ 1 դպրոցի տանիքի վերանորոգման,,** աշխատանքների համար 23780324.0 /քսաներեք միլիոն յոթ հարյուր ութսուն հազար երեք հարյուր քսանչորս/ ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ.
- **„Սիսիան համայնքի թիվ 5 դպրոցի պատերի և հիմքերի ուժեղացման,,** աշխատանքների համար 56241099.0 /հիսունվեց միլիոն երկու հարյուր քառասունմեկ հազար իննսունինն/ ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ:

5.2 **Աշխատանքի** գինը կայուն է և **Կապալառուն** իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ **Պատվիրատուն** նվազեցնելու այդ գինը:

5.3 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (**Կապալառու** և (կամ) **Պատվիրատու**) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 **Պատվիրատուն** վճարում է **Աշխատանքի** կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի **Աշխատանքների**, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները **Կապալառուի** հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 Հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 րանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված **Աշխատանքի** դիմաց վճարելու համար N 3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2014 թ. դեկտեմբերի 25-ր՝ պայմանով, եթե **Աշխատանքը** կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ **Պատվիրատուի** համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 **Կապալառուն** պատասխանատվություն է կրում **Աշխատանքի** որակի և սույն **Պայմանագրի** 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն Պայմանագրով Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում **Կապալառուից** յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ննթակա, սակայն չկատարված **Աշխատանքի** գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից **Աշխատանքը** չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում **Կապալառուից** գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասներդական) տոկոսի չափով:

6.4 Սույն Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են **Կապալառուին** վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է՝ տույժ՝ վճարման ննթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Սույն Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել **Պայմանագիրը**՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Այլ պայմաններ

8.1 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև պայմանագրի կնքումը, **Կապալառուն** ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ **Կապալառուին** հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, **Պատվիրատուն** իրավունք ունի միակողմանիորեն լուծելու **Պայմանագիրը**, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, **Պատվիրատուն** չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով **Կապալառուի** համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ **Կապալառուն** պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով **Պատվիրատուի** կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման **Պայմանագրի** կատարմամբ **Պատվիրատուի** ստացածով:

8.2 Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում **Կողմերի** ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնությամբ: Սույն Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն Պայմանագրի հետ կապված վեճերը ննթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն **Կողմերի** փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամրոցությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ոնդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամրոցությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող **Աշխատանքի** ծավալների կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Եթե պետության կարիքների համար կնքվելիք պայմանագրի գինը գերազանցում է գնումների բազային միավորի երեք հարյուր հիսնապատիկը, ապա տվյալ պայմանագիրն ուժի մեջ մտնելու պայման է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տվյալ գնման ընթացակարգի արդյունքների հաստատումը:

Եթե գործակալության միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, ապա՝

1) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխությունն իրականացվում է **„Պատվիրատուի,,** համաձայնությամբ:

2) **„Կատարողն,,** է պատասխանատվություն կրում գործակալի պարտավորությունների համար:

„Աշխատանքի,, կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ **„Պատվիրատուի,,** մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

8.5 Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամրոցությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

2) պայմանագրով նախատեսված **Աշխատանքի** շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

8.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.7 Սույն **Պայմանագիրը** և հավելվածները կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն **Պայմանագրի** N 1, N 2, N 3 և N 4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.8 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու

Կապալառու

ՀՀ Սյունիքի մարզպետարան

ք.Կապան Գ. Նժդեհ 1

ՀՀ ՖՆ Կենտրոնական գանձապետարան

Հ/Հ 900312000046

900312000038

Հ/Հ 09415375



Ռ. Ղազարյան

«Մեղրու ՏՇՇԶ» ՍՊԸ

ք. Մեղրի Գործարանային 89

«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ «Մեղրի» մ/Ը

Հ/Հ 247020001654

Հ/Հ 09700228



Գասպարյան